ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 29-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, որին ներկա էին ընկ. ընկ. Կ. Դեմիրճյանը, Ֆ. Սարգսյանը, Ռ. Արզումանյանը, Լ. Սահակյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Ցու. Խոջամիրյանը, ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ Ա. Մկրտչյանը, Հայկական ՍՍՀ պետպլանի նախագահի առաջին տեղակալ Մ. Էղիյանը:

Ժողովը ներածական խոսքով բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը: ՍՄԿԿ XXVII համագումարը մշակեց մեր երկրի զարգացման և վերակառուցման ծրագիր, ասաց նա: Այն առանձնահատուկ տեղ է տալիս գիտությանը, նրա կիրառություններին և առհասարակ գիտատեխնիկական առաջադիմությանը: Իր ելույթներում ընկեր Մ. Ս. Գորբաչովը բազմիցս նշել է, որ որակական զարգացման ցածր տեմպերի պատճառով երկրի մեքենաշինության շատ ճյուղեր, օրինակ, հաստոցաշինությունը, հետ են մնացել համաշխարհային մակարդակից: Պատճառը գիտատեխնիկական նոր գաղափարներով չնվազն է, այլինքն՝ տեխնիկական մտքի լճացումը: Այստեղից պարզ է նաև հիմնարար գիտության առաջնահերթ նշանակությունը մեր երկրի առաջադիմության համար: Ահա թե ինչու, շարունակեց Վ. Համբարձումյանը, պետք է ողջունել այն փաստը, որ մեր կուսակցության և կառավարության վերջին մի շարք կարևոր փաստաթղթերում ընդգծվում է հիմնարար գիտության նշանակությունը և նոր պահանջներ են դրվում նրա առջև: Սակայն ցավով պետք է նշել, որ մեր հիմնարար գիտությունը, գուցե ավելի քիչ չափով, քան կիրառական գիտությունները, հաճախ հետ է մնում ժամանակից մակարդակից: Եթե տեսական խնդիրների լուծման մեջ մենք այսօր պահպանում ենք առաջնային դիրքեր (օրինակ, ֆիզիկամաթեմատիկական գիտություններում), ապա դա չի կարելի ասել այդ նույն բնագավառի փորձարարական ճյուղերի մասին: Այս ուղղությամբ անհրաժեշտ է մեծ աշխատանք կատարել:

Պրեզիդենտը, խոսելով ՍՍՀՄ-ում կենսաբանական գիտությունների զարգացման մասին, նշեց, որ վերջին տարիներին կատարվել է մեծ աշխատանք, վերականգնվել են այդ բնագավառի տեսական մի շարք ուղղություններ, մշակվել է, այսպես կոչված, բիոտեխնոլոգիայի ծրագիր: Կենսաքիմիայի, միկրոկենսաբանության, ֆիզիոլոգիայի, այդ թվում բույսերի ֆիզիոլոգիայի բնագավառներում Հայաստանում հասել են համեմատաբար լավ մակարդակի:

Գիտության մեջ, մասնավորապես հանրապետության գիտությունների ակադեմիայում, վերակառուցման աշխատանքի մասին խոսելիս Վ. Համբարձումյանը նշեց, որ նախ և առաջ անհրաժեշտ է ճշտել առաջնային նպատակները և ուղղությունները, քանի որ գիտության մեջ իշխող իրավիճակը մեր օրերում անընդհատ և արագորեն փոփոխվում է, շարունակ առաջանում են նոր խնդիրներ: Կարևոր խնդիրներից մեկն էլ կազմակերպչական վերակառուցումն է: Ակադեմիայի համակարգում համարյա ավարտվել է հաստիքային համակարգի վերակառուցման աշխատանքը, որի շնորհիվ առանձին ինստիտուտներում մեծապես բարձրացել է աշխատանքի ինտենսիվությունը: Պրեզիդենտը հավաստիացրեց, որ նախագահությունը ամեն ինչ կանի, որպեսզի ինստիտուտների կառուցվածքը օպտիմալ չափով համապատասխանի մասնագիտության առանձնահատկություններին: Այնուհետև Վ. Համբարձումյանն անդրադարձավ նորագույն առաջադիմական տեխնիկայի, արդիական սարքավորումների ձեռքբերման, դրանց յուրացման, կատարելագործման և ճիշտ օգտագործման հարցերին, ասաց, որ մասնավորապես կարևոր է, որպեսզի բոլոր մասնագիտությունների աշխատողները տիրապետեն մաթեմատիկական մեթոդներին, ծանոթ լինեն հաշվողական տեխնիկային և ինֆորմատիկայի գաղափարներին: Նա նշեց, որ կադրերը պետք է տիրապետեն նաև նոր զարգացող գիտական մեթոդներին, առանց որի գիտական առաջընթացի մասին խոսք լինել չի կարող:

Արտադրության վրա ակադեմիական գիտության ազդեցության ուժեղացման մասին խոսելիս Վ. Համբարձումյանն ասաց, որ դա պետք է

լինի նաև վերակառուցման կարևոր նպատակներից մեկը։ Այդ ադեկցությունը կատարվում է երեք միջոցներով՝ գիտության արդյունքների հրապարակման, գերատեսչական գիտության հետ համագործակցության և ակադեմիայի ինստիտուտներին կից հատուկ կոնստրուկտորական բյուրոների ու փորձնական գործարանների ստեղծման միջոցով։ Ուստի և վերակառուցման ընթացքում պետք է լուրջ ուշադրություն դարձնել այդ միջոցների զարգացմանը։ Ցավոք, գիտափորձերի արդյունքների հրապարակումը մեզ մոտ սահմանափակ է պոլիգրաֆ բազայի անբավարար հզորության պատճառով։ Այդ իսկ պատճառով էլ անհրաժեշտ է, որպեսզի ակադեմիային միջոցներ տրվեն ժամանակակից տպարան ստեղծելու համար։ Օրվա հարց է դարձել նաև ինֆորմատիկայի բնագավառին վերաբերող նոր ամսագրի ստեղծումը։

Վերջին երեք տարիների ընթացքում ակադեմիայի ինստիտուտները պայմանագրային հիմունքներով իրականացրել են մի քանի միլիոն ռուբլու աշխատանք։ Մինիստրությունները, անշուշտ, գոհ են ինստիտուտների հատուկ կոնստրուկտորական բյուրոների և փորձնական գործարանների կողմից կատարվող աշխատանքից։ Սակայն փոխանակ իրենց մոտ կիրառելու մեր մշակած արտադրության ձևերը, նրանք հաճախ գիմում են մեզ ավելացնելու փորձնական արտադրանքի ծավալները, այսինքն՝ տալու դրանց մասսայական արտադրանք։ Թույլ են կապերը արդյունաբերության հետ։ Բոլոր բաժանմունքները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն այս հարցին։

Ընդլայնվում է գյուտարարական գործունեությունը, որը նույնպես ներդրման մի ճանապարհ է։ Գիտությունների ակադեմիայի հիմնարկները 1986 թ. ներկայացրել են հայտեր 210 գյուտերի մասին։ Դրական որոշում է ստացվել 120 գյուտերի մասին։

Անդրադառնալով գիտական կադրերի հարցին, Վ. Համբարձումյանը ընդգծեց գիտության վերակառուցման գործում երիտասարդ գիտական կադրերի որակավորման բարձրացման վճռական նշանակությունը։ Այդ իսկ առումով ակադեմիան ոչ միայն պետք է բարելավի ասպիրանտուրայի և գիտական կադրերի տնական ուսուցման գործը, այլև շահագրգռություն հանդես բերի նաև միջնակարգ և բարձրագույն դպրոցների աշխատանքի բարելավման համար։ Ակադեմիայի ցանցում կադրերի պատրաստման ուղղությամբ կան թերություններ։ Օրինակ, հաճախ ասպիրանտի ղեկավարը չունի գիտության դոկտորի աստիճան։ Վերակառուցումը նախատեսում է ակադեմիայի աշխատանքներում դեմոկրատական սկզբունքների լայն արմատավորում։

Խոսելով վերակառուցման պրոցեսի կազմակերպչական կողմի մասին, պրեզիդենտը նշեց, որ այդ ուղղությամբ որոշ քայլեր կատարվել են։ Կրճատվել են շատ բաժիններ ու լաբորատորիաներ, դրանց փոխարեն ստեղծվել են ժամանակավոր թեմատիկ խմբեր։ Ատեստավորման ընթացքում մի շարք ինստիտուտներում հաջողվեց աղատվել թույլ գիտական աշխատողներից, կրճատել մանր, ոչ կարևոր թեմաները։ Բոլոր այն ինստիտուտներում, որտեղ լրջորեն մոտեցան կազմակերպական վերակառուցմանը, արդեն նկատելի է գիտական աշխատանքի վերելք։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գիտական կոլեկտիվները, վերջում ասաց Վ. Համբարձումյանը, համակված են նորովի աշխատելու վճռական շրջադարձի անհրաժեշտության գիտակցությամբ։ Նա հավաստիացրեց, որ հանրապետության գիտնականները իրենց վրա դրված բարձր պահանջները հաջողությամբ կկատարեն։

«Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի 1986 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Դ. Սանդրակյանը։ Հաշվետու տարում ԳԱ գործունեությունը նպատակամղված է եղել հանրապետությունում մշակվող գիտական հիմնարար և կիրառական ուղղությունների հետագա խորացմանը և ինտենսիվացմանը, գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, գիտակազմակերպչական որոշակի միջոցառումների կիրառմանը՝ դիտական պոտենցիալի առավել արդյունավետ օգտագործման համար, ասաց նա։ ԳԱ նախագահությունը որոշակի միջոցներ է ձեռնարկել՝ վերակառուցելու հանրապետության գիտական հիմնարկների գործունեության կոորդինացման, գիտական կադրերի պատրաստման, նրանց որակավորման բարձրացման և տեղաբաշխման ուղղությամբ տարվող աշխատանքը։ Վերակառուցման համար կազմակերպչական հիմք հանդիսացավ դիտական աշխատողների վարձատրության նոր համակարգին անցնելը, որը հնարավորություն տվեց ձևափոխել գիտական հիմնարկի ներքին կառուցվածքը այնպես, որ այն ռացիոնալ ձևով արտահայտի տվյալ մասնագիտության առանձնահատկությունները։ Ընդ որում, կառուցվածքի ընտրության ձևը հիմնականում բխեց գիտահետազոտական աշխատանքների թեմաների յուրօրինականությունից և դրանց ըստ կարևորության դիֆերենցումից։ Հիմնականում ինստիտուտները անհրաժեշտ լրջությամբ մոտեցան պետական այդ կարևոր խնդրին, հասկանալով, որ վերակառուցումը նպատակ ունի ի հայտ բերելու

գիտական պոտենցիալ ուժերը և դրանք ծառայեցնելու տվյալ գիտության այսօրվա առաջնային ուղղությունների շահերին։ Ապա զեկուցողը խոսեց Բյուրականի աստղաֆիզիկական դիտարանում կատարված կառուցվածքային խոր փոփոխությունների մասին, նշեց, որ դրա շնորհիվ խիստ բարձրացել է գիտական աշխատանքի արտադրողականությունը։ ԳԱ ինստիտուտներում տեղի են ունեցել կառուցվածքային լուրջ փոփոխություններ, նվազել է բաժինների (լաբորատորիաների) քանակը, նոր ստեղծված գիտական միավորները ավելի են համապատասխանում այն հատուկ խնդիրների լուծմանը, որոնք դրված են յուրաքանչյուր ինստիտուտի առջև։

1986 թ. ակադեմիայում գիտահետազոտական աշխատանք է տարվել 132 պրոբլեմների գծով, որոնք ընդգրկում են 298 թեմա (բնական գիտությունների գծով 201, հասարակական գիտությունների գծով՝ 97)։ ԳԱ գիտական հիմնարկները մասնակցել են համամիութենական և հանրապետական 25 կոմպլեքս ծրագրերի իրագործմանը։ Ավարտվել են 68 պայմանագրային թեմաներ, որոնք ընդունված են պատվիրատուների կողմից։ Միջգերատեսչական հանձնաժողովների կողմից ներդրման համար երաշխավորվել են վերջին տարիներին ավարտված 16 մշակումների արդյունքներ։

Սակայն ներդրումը, այնուհետև շարունակեց Դ. Սեդրակյանը, մնում է գիտությունների ակադեմիայի գործունեության ամենաթույլ կողմը։ Արմատական թերությունն այն է, որ չկա մտածված միասնական համակարգ, որը ապահովեր ներդրման աշխատանքի բոլոր փուլերի կապը՝ գյուտերի վերլուծումից և ընտրումից սկսած մինչև դրանց արմատավորումը։ Գյուտարարության հարաճուն տեմպերը պահանջում են արմատապես վերակառուցել նաև ակադեմիայում գյուտերի ներդրման կազմակերպչական մեխանիզմը։ Այսպես, անցած տարում ակադեմիայում ստացված գյուտերի թիվը հասավ 132-ի, այսինքն 1980 թ. համեմատ համարյա կրկնապատկվեց։ Սակայն օգտագործված գյուտերի քանակը մնում է անփոփոխ, կազմելով մոտ 20։ Փաստորեն ստեղծվել է մի իրավիճակ, երբ գյուտերի քանակը տարեցտարի աճում է՝ առանց արտադրության վրա ազդեցություն թողնելու։

Անդրադառնալով հասարակագիտական գիտությունների բնագավառում վերակառուցման էությանը, ակադեմիկոս-քարտուղարն ասաց, որ այն կոչված է որակապես ամրապնդելու կյանքի հետ դրանց կապը, ապահովելու դրանց անցումը էքստենսիվ ուղուց դեպի ինտենսիվ ուղի։ Պետք է կտրուկ բարձրանա հասարակական գիտությունների արդյունավետությունը, դրանց դերը սոցիալիստական հասարակության բոլոր կողմերի պլանաչափ կատարելագործման գործում։

Հաշվետու տարում զգալիորեն բարելավվել են ՀՍՍՀ ԳԱ հիմնարկների ու բուհերի բնական և հասարակական գիտությունների բնագավառում գիտական գործունեության կոորդինացման խորհրդի աշխատանքները։ Նկատվում է խորհրդի ամբողջ գործունեության վերակառուցում, ամրապնդվում են Հայկական ՍՍՀ ակադեմիական և արտաակադեմիական գիտական կազմակերպությունների կապերը։ Սակայն դեռևս լավ չի իրականացվում հանրապետությունում տարվող հաստատեղ գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը, բացակայում է հետադարձ կապը կոորդինացիոն խորհրդի և հանրապետության բուհական գիտական կենտրոնների, ճյուղային գիտահետազոտական ինստիտուտների և այլ գիտական կազմակերպությունների միջև։ Գիտահետազոտական էքսորդինացիոն պլանից դուրս են մնացել մի շարք ճյուղային ինստիտուտներ և դիտաարտադրական միավորումներ։

Անցած տարվա ընթացքում, վերջում ասաց զեկուցողը, ակադեմիայի աշխատակիցների կողմից պաշտպանվել են 26 դոկտորական և 30 թեկնածուական դիսերտացիա։ Դրա հետ մեկտեղ կան ակադեմիական ինստիտուտներ, որտեղ չի աշխատում և ոչ մի դոկտոր։ ԳԱ ինստիտուտների ապահովվածությունը գիտության դոկտորներով առայժմ ցածր է և կազմում է գիտական աշխատակիցների ընդամենը 6,3 տոկոսը։ Զգաստանց ցածր է նաև ասպիրանտուրայի արդյունավետության ցուցանիշը՝ հաշվետու տարում ասպիրանտուրան ավարտած 91 հոգուց ոչ մեկը սահմանված ժամկետում դիսերտացիա չի պաշտպանել։

Զեկուցման շուրջը ծավալված մտքերի աշխույժ փոխանակությանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Գ. Բրուտյանը, Մ. Տեր-Միքայելյանը, Բ. Առաքելյանը, Գ. Սարգսյանը, Վ. Ղազարյանը, Մ. Սերոբյանը, ակադեմիայի թղթակից անդամներ Ա. Բաղդասարյանը, Գ. Տեր-Ստեփանյանը։

ՀՍՍՀ ԳԱ տարեկան ընդհանուր ժողովում տեղի ունեցավ հանրապետության գիտությունների ակադեմիայի պատվավոր պարգևների հանձնման ամենամսյա հանդիսավոր արարողություն։

Բեղմնավոր հանրօգուտ գործունեության համար «Մեծարման գիր» ստացավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Զրբաշյանը։ Գիտահետազոտական արդյունավետ գործունեության համար «Վաստակաթերթ» ստացան ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամներ Ս. Մովսիսյանը, Մ. Ինճիկյանը, Ա. Մկրտչյանը, գիտության դոկտորներ Մ. Զալալյանը, Գ. Հա-

Կորյաները, գիտության թեկնածուներ Ռ. Սարգսյանը, Է. Ղազյանը։ Մի մեծ խումբ գիտական աշխատողների հանձնվեցին գովեստագրեր, պատվոգրեր։

Ժողովում գիտական զեկուցումներով հանդես եկան ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամներ Վ. Խաչատրյանը («Հայկական ՍՍՀ բնակչությունը և աշխատանքային ռեսուրսները 1986—2010 թթ.»), Ա. Քալանթարյանը («Հինգերորդ սերնդի հաշվիչ մեքենաներ՝ խնդիրներ և հեռանկարներ») և Վ. Դավթյանը («Նոր պեստիցիդների ստեղծման որոշ հարցերի մասին»)։

ՀՍՍՀ ԳԱ տարեկան ընդհանուր ժողովում հաստատվեց ՀՍՍՀ ԳԱ Լենինականի գիտական կենտրոնի կանոնագրությունը։

Տեղի ունեցան քիմիական և երկրաբանական գիտությունների բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարի ընտրություններ։ Ակադեմիկոս-քարտուղար ընտրվեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Վարդանյանը։

ՀՍՍՀ ԳԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ

Ապրիլի 28-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի տարեկան ժողովը։ Բաժանմունքի 1986 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Առաքելյանը։ Նա ասաց, որ 1986 թվականը հանդիսացավ Սովետական Միության հասարակական-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի՝ ՍՄԿԿ XXVII համագումարի կողմից նախատեսված վերակառուցման ընթացքի արագացման տարի։ Դա վերաբերում է նաև գիտության ընդավանին։ Բարձր գնահատվեց նաև հասարակական գիտությունների դերն ու նշանակությունը սովետական հասարակության կյանքում։ ՍՄԿԿ Կենտկոմը և Սովետական Միության Մինիստրների խորհուրդը ընդունեցին մի շարք որոշումներ և միջոցառումներ՝ նպատակամղված գիտության վերակառուցմանն ու հետագա զարգացմանը։ Մասնավորապես պետք է նշել գիտական աշխատանքի կազմակերպման և վարձատրության նոր կարգին անցնելուն վերաբերող որոշումը։ Այդ որոշման ոգով վերակառուցումներ կատարվեցին նաև բաժանմունքի հիմնարկներում։ Մշակվեցին և ճշտվեցին դրանց գիտական հիմնական ուղղությունները, որոնց համապատասխան փոփոխվեց հիմնարկների կառուցվածքը, անցկացվեցին աշխատողների ատեստացիաներ և հիմնարկներն անցան աշխատավարձի վճարման առաջադրված հինգ կարգերին։ Այս ամենով հանդերձ, վերակառուցումը մնում է նախնական շրջանակներում, քանի որ գիտահետազոտական աշխատանքների ավելի հաջող կազմակերպումը, մանավանդ արդյունավետության և որակի բարձրացումը դեռևս չեն տալիս սպասվելիք արդյունքը։

Ակադեմիկոս Բ. Առաքելյանը հանգամանորեն խոսեց բաժանմունքի հիմնարկների՝ պատմության, տնտեսագիտության, հնագիտության և ազգագրության, արևելագիտության ինստիտուտների, հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնի, սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժնի, բաժանմունքին կից գիտական խորհուրդների, բաժանմունքի բյուրոյի գործունեության, կադրերի վիճակի և բաժանմունքի միջազգային կապերի մասին, նշեց ձեռք բերված նվաճումները։ Գիտության մասսայականացման և գիտական քննադատության ուղղությամբ որոշակի աշխատանքներ են կատարում ՀՍՍՀ ԳԱ հասարակագիտական պարբերականները՝ «Պատմա-բանասիրական հանդեսը» և «Լրաբեր հասարակական գիտություններից» ամսագիրը, որոնք տարածվում են նաև արտասահմանում ու նպաստում սովետական գիտության և մեր գաղափարախոսության պրոպագանդային։ Խոսելով դաղափարախոսական պայքարի, արտաքին քաղաքական պրոպագանդայի և հակապրոպագանդայի բնագավառում հասարակագետների առջև ծառացած խնդիրների մասին, նա մանավորապես կանգ առավ հայ ժողովրդի պատմության առանցքային հարցերի պրոպագանդման խնդրի վրա։ Պատմաքաղաքական բնույթի հույժ սուր հարցերից մեկը պահանջում է գիտական խոր, նպատակասլաց և կազմակերպված աշխատանք։ Խոսքը վերաբերում է ամենից առաջ Թուրքական բռնակալության տիրապետության դեմ մեր ժողովրդի մղած ազատագրական պայքարի, Թուրքական իշխանությունների կողմից XX դարում իրականացված գենոցիդի խնդրի շուրջ այժմ ծավալված գաղափարական և քաղաքական պայքարի հարցերին։ Պատմության Թուրքական կեղծարարները հայերի գենոցիդը ժխտելու նպատակով լայն կամպանիա են տանում հայ ժողովրդի անցյալի, նաև նոր ժամանակի պատմության նենգափոխման ուղղությամբ, հայ ժողովրդին վերագրելով զանազան մտացածին պատմական, քա-

ղաքական մեղքեր։ Այդ նպատակով նրանք կատարում են հրապարակումներ՝ աշխարհի տարբեր լեզուներով, օգտագործելով նաև միրենց շրջանցին չուր լցնող ծախու գրչակներին։ Հարկ է նշել, որ այդ ամենն ուղեկցվում է նաև հակառուսական, հակասովետական քաղաքականությամբ և գաղափարախոսությամբ։ Անհրաժեշտ է, որպեսզի պատմության կեղծարարներին արվի խելացի, գիտականորեն հիմնավորված հակահարված, այդ ուղղությամբ կատարվող աշխատանքները պետք է լայնորեն դուրս բերել ոչ միայն միութենական, այլև միջազգային ասպարեզ։ Զեկուցողը ասաց նաև, որ գիտական և գաղափարական կարևոր նշանակություն ունի հայ ժողովրդի կազմավորման հարցը և այդ առնչությամբ հայերի և ուրարտների պատմական դերը։ Նա նշեց, որ ուրարտները, կազմելով զորեղ պետություն, որը էթնիկական խառը կազմ ուներ, չկարողացան լեռնաշխարհի բոլոր ցեղերը միավորել մեկ միասնական ժողովրդի մեջ և իրենք, լինելով բնակչության խիստ փոքրաթիվ մասը, ձուլվեցին հայերի մեջ, քանի որ հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը սկսվել էր ուրարտական պետության առաջացումից շատ ավելի վաղ, իսկ ուրարտական պետության ժամանակաշրջանը հանդիսացավ հայ ժողովրդի կազմավորման արագացման և դեպի ավարտը տանող ժամանակաշրջան։ Ակադեմիկոս Բ. Առաքելյանը նաև ասաց, որ հայ, աղվանական և ադրբեջանական ժողովուրդների պատմության հարցերի առթիվ վերջին ժամանակներս ադրբեջանցի առանձին պատմաբաններ առաջադրել են ոչ միայն վիճելի, այլև մեր ժողովուրդների բարեկամությանը վնաս բերող թյուր տեսակետներ։ Դրանք պետք է հաղթահարվեն և լուծում ստանան գիտնականների համատեղ, լուրջ և անաչառ քննարկմամբ։

Այնուհետև Բ. Առաքելյանը անդրադարձավ բաժանմունքի գիտական աշխատանքներում եղած թերություններին (գիտահետազոտական աշխատանքների պլանավորման գործում, կադրերի հետ տարվող աշխատանքներում, մանրաթեմայնության վերացման գործում, կարգապահության հարցերում և այլն), հիմարկների աշխատանքներին խանգարող հանգամանքներին (աշխատանքային համապատասխան տարածք՝ սենյակներ, չունենալը, գործուղումների հարցը, տեխնիկական միջոցների և տարբալորումների բացակայությունը և այլն)։

Բաժանմունքի կոորդինացիոն աշխատանքների մասին հաղորդումով հանդես եկավ բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղակալ, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Վ. Խաչաթրյանը։

Բաժանմունքի իսկական անդամների և թղթակից անդամների 1986 թ. գործունեության մասին հաղորդումով հանդես եկավ բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղակալ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Սարգսյանը։

Զեկուցման շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Գ. Ղարիբջանյանը, Ա. Առաքելյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Վ. Խաչաթրյանը, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Գ. Գետոյանը։ Նրանք հավանություն տվեցին հաշվետու զեկուցմանը, բաժանմունքի 1986 թ. գործունեությունը գնահատեցին բավարար և խոսեցին թուրքական պատմագրության հակագիտական պրոպագանդային ինտերնացիոնալիստական և մարքսիստական դիրքերից արժանի հակահարված տալու մասին, առաջարկեցին այդ առթիվ հրատարակել գրքեր ռուսերեն և օտար լեզուներով։ Նյութ ունեցողները անդրադարձան նաև հասարակական գիտությունների ինստիտուտների համակարգում առկա կատեգորիաների հարցին, խոսեցին որակյալ և բանիմաց երիտասարդ կադրերի պատրաստման, հաշվիչ տեխնիկայի արմատավորման ու օգտագործման անհրաժեշտության և այլ հարցերի մասին։ Մտքերի փոխանակությունն ամփոփեց Բ. Առաքելյանը։

Ժողովում զեկուցումներով հանդես եկան ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Հ. Ավետիսյանը և պատմական գիտությունների դոկտոր Ս. Հովհաննիսյանը։ Հ. Ավետիսյանի զեկուցման թեման էր «Պատմական գիտության խնդիրները ՍՄԿԿ XXVII համագումարի և ՍՄԿԿ ԿԿ հունվարյան (1987 թ.) պլենումի որոշումների լույսի ներքո», իսկ Ն. Հովհաննիսյանինը «Իսլամի ակտիվացումը Է Նրա քաղաքական դերը ժամանակակից էտապում»։

ՀՍՍՀ ԳԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 27-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի տարեկան ժողովը։ Բաժանմունքի 1986 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բրուտյանը։ 1984 թ. ապրիլյան պլենումը, ՍՄԿԿ XXVII համագումարը մշակեցին մեր երկրի ու ժողովրդի կյանքում էական նոր

փուլ հանդիսացող վերակառուցման, հիրավի, հեղափոխական նշանակություն ունեցող ծրագիր, ասաց նա։ Վերակառուցումը տնական պրոցես է, որը նոր միայն սկսվել է և պահանջում է որակապես նոր աշխատանք։ Վերակառուցումը մեծապես վերաբերում է նաև գիտության բնագավառում աշխատող բոլոր մարդկանց։ Այժմ ակադեմիայի հիմնական օղակը դառնում է բաժանմունքը, որի վրա մեծ պատասխանատվություն է դրվում գիտական աշխատանքների կազմակերպման համար։ Հաշվետու ժամանակաշրջանում բաժանմունքի գիտական հիմնարկները ևս վերակառուցվեցին. միացվեցին մի շարք բաժիններ, բացվեցին նորերը, կատարվեցին որոշ կրճատումներ, անցանք վարձատրության նոր համակարգին։ Սակայն դա վերակառուցման եղանակն է, ձևը, բայց ոչ նպատակը։ Վերակառուցման նպատակը գիտական, հիմնարար նոր արդյունքներ ստանալն է, գիտական այնպիսի նվաճումների ձեռքբերումը, որոնց ստացումը նախկին եղանակներով անհնար էր։ Վերակառուցման արմատական խնդիրները նոր իրավունքներ և պարտականություններ է դնում յուրաքանչյուրի վրա։ Վերակառուցման և մեր աշխատանքի գլխավոր հիմքը պետք է լինի պրոբլեմների, հարցերի գիտական ճիշտ պլանավորումը։ Միմիայն նման պլանավորման միջոցով մենք կարող ենք հասնել հիմնարկների գործունեության արմատական բարելավմանը։

Գ. Բրուտյանը անդրադարձավ հաշվետու ժամանակաշրջանում բաժանմունքի ինստիտուտների ձեռք բերած հաջողություններին, կարևոր նվաճումներին։ 1986 թ. բաժանմունքի ինստիտուտների մակնիշով լույս է տեսել 33 անուն գիրք։ Նա թվարկեց փիլիսոփայության և իրավունքի, լեզվի, գրականության և արվեստի ինստիտուտների հրատարակած այն գրքերը, որոնք ներկայացվել են ակադեմիական համապատասխան պարգևատրության։ Այնուհետև զեկուցողը հանգամանորեն խոսեց ինստիտուտների առջև դրված խնդիրների, եղած թերությունների մասին։ Մասնավորապես նա անդրադարձավ ինստիտուտների գիտական պոտենցիալի ճիշտ օգտագործման, հրատարակված գրքերի լեզվի, հայ ժողովրդի ծագման և կազմավորման հարցի շուրջ նստաշրջան կազմակերպելու, հայ փիլիսոփայության պատմության ստեղծման, հուշարձանների համահավաքի աշխատանքների, օտար լեզուների իմացության, մեր մշակույթի տարածման գործում հայերեն, ռուսերեն և օտար լեզուներով գիտահանրամատչելի գրականության հրատարակման հրատապության, գիտության վաստակավոր գործչի և արվեստի վաստակավոր գործչի կոչումներ շնորհելու մասին։

Բաժանմունքի իսկական անդամների և թղթակից անդամների 1986 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին հանգամանորեն խոսեց բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղակալ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ջանուկյանը։

Փիլիսոփայության, բանասիրության և արվեստի բնագավառում հանրապետության բուհերի 1986 թ. հետազոտությունների արդյունքներին և կոորդինացիայի խնդիրներին անդրադարձավ բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղակալ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Է. Ջրբաշյանը։

Բաժանմունքի 1986 թ. գործունեության արդյունքների քննարկմանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Է. Աղայանը և ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Է. Աբայանը։ Նրանք հավանություն տվեցին հաշվետու զեկուցմանը, բաժանմունքի 1986 թ. գործունեությունը գնահատեցին բավարար և խոսեցին հանրապետության գիտական մտքի ըստ էության հիմնավոր կոորդինացման, ակադեմիայի և բուհերի գիտաշխատողների, բուհական ամբիոնների աշխատակիցների սերտ համագործակցության, գիտության տարբեր բնագավառներ ընդգրկող բառարանների կազմման, գիտաշխատողների կողմից օտար լեզուների ուսումնասիրման հարցերի մասին։ Մտքերի փոխանակությունն ամփոփեց Գ. Բրուտյանը։

Ժողովում լսվեցին զեկուցումներ։ Փիլիսոփայական գիտությունների թեկնածու Գ. Պողոսյանը խոսեց տնտեսական ծրագրերի սոցիոլոգիական ապահովման, իսկ ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Է. Աբայանը՝ լեզուների ձևաբանական տիպաբանության առարկայի և «անհատական լեզվական ձևի» բացահայտման խնդրի մասին։